իշխան եմ համարել[1]։ Բայց այժմ տեսնելով և հայ Պռոշ իշխանին նոցա թուում, աւելի հաւանական եմ համարում, որ մեր վէպի փոփոխակներում «Լոռուայ Հըմզայ փահլևանը» (№ 1, էջ 19, 21, 22), «Լոռու, Լոռուայ Համզէն» (№ 13, էջ 31), 37—39 (65, 71—73 և № 3, էջ 46) հայ իշխան լինի։ Եւ ըստ ամենայն հաւանականութեան վէպի Համզան Ժ. դարում ապրող իշխան Պահլաւունի Գրիգոր Համզէն[2] է, որ իւր կին չքնաղ Շուշանիկի հետ նշանաւոր են թողած յիշատակներով։ Պահլաւունիք Լոռուայ սահմանի մօտերը կալուածքներ ունէին Բջնիի, Ջաղկաձոր—Դարաչիչագը, ինչպէս յայտնի է Մ. Ուռհայեցու տարեգրութիւնից և Կեչառու վանքի արձանագրութիւններից. բացի այդ Գրիգոր Համզայի թոռ Գրիգոր Մագիստրոսի կալուածքն են եղել «Կայան և Կայծոն»[3], որոնցից առաջինը այժմ էլ իւր աւերակներով և միևնոյն անունով յայտնի Լոռուայ Կայանու բերդն է։ Դիլիջանի մօտ էլ կայ Բոզի կամ Համզա գիւղ և Ղազախի մի գաւառամասը կոչւում է սոյնպէս Համզա[4]։ Ուստի և շատ հասկանալի է Գրիգոր Համզայի Լոռուայ Համզայ կոչումը։ Այս Գրիգոր Համզէի որդի Վահրամն էլ յայտնի է, որ ոչ միայն մեզնում, այլ և Վրաց մէջ դիւցազնական հռչակ է վայելել[5], ինչպէս և երբեմն Վահագն Վիշապաքաղը[6]։

Վերևը մենք տեսանք խաչակրութեան աղդեցութիւնը մեր Զոջանց վէպի վրայ. ուստի մեզ թուում է Պարան Բուէքը, որ միշտ կոչւում է «Պարան Բուէք Ֆորնցայ» (№ 14, § 116, 117, 120), պէտք է լինի Ֆորնկայ, այսինքն ֆռանկ։ Ֆորնցայ՝ անծանօթ բառատաւաքը բացատրում է փակագծում, որ մենք ներքև դրինք, «Թևաւոր, թռուցիկ»։ Այստեղ ժողովրդական ֆռալ, թերևս ֆորնֆալ բայով է բացատրուած։ Բայց մեզ թուում է, որ այդ ժողովրդական բացատրութիւնը նման է ջալալ—ջալաթի մեկնութեան և հէնց այդ հնչման նմանութեան շնորհիւ Հայոց Ջորում ժամանակին անծանօթ ֆրէնկի-ն դարձել է ֆռնֆայ, դևին հասկանալի մակդիր[7]։ Մենք տեսանք, որ ժողովուրդը հնչիւնների նմանութեամբ բոլորովին տարբեր ծագում ունեցող բառերը նոյն է համարում. բացի այն որ մի քանի բարբառներում կ և տ ձայնների փոփոխութիւնները ևս կան։ Այսպէս պռունդ կամ պռուկ (որից պռոշ, պռոշտի) խոյեցիք ասում են «պռկէ պռուկ», բայց

1. Արարատ Ամս. 1906. Ապրիլ. էջ 538—544. ծանօթ. 5.
2. Ալիշան, Տիրակ էջ 52—55. Կ. Կոստանեան. Գր. Մագիստրոսի Թղթերը ԺԱ. էջ 45 եւ յաւելուածքներ ԺԳ—ԺԵ. Ալէքսանդրապոլ 1910.
3. Վարդան վրդ. Պատմ. Նոր. էջ 99. Վենետիկ 1862.
4. «Սուրհանդակ» լրագիր. 1910. № 154. էջ 4. Թիֆլիս։
5. Կ. Կոստանեան, Գր. Մագիստրոսի Թղթերը. ԺԱ. էջ 39—40.
6. Խորեն. Ա. Լ. 57—58.
7. «Դեւք ... բեւաւորք». Զենոբ, էջ 32. Վենետիկ 1889.